



Ա. ԵՐԵՎԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ԵՐԵՑԻ ՄԵԾԱՐԺԵՔ ԶԵՌԱԳԻՐ ՄԱՏՅԱՆԸ¹

1. ԶԵՌԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆԸ



արյուր վաթսուն երկար ու ձիգ տարիներ փոշիների տակ ընկած է պատմագիր Ստեփանոս Երեցի արժեքավոր ձեռագիր պատմությունը և դեռ մինչև օրս էլ, դժբախտաբար, նա լույս չի տեսել առանձին գրքով:

Դա 12x20 սմ. ծավալով, կաշեկազմ, լավ թղթի վրա շարադրված, 488 էջից բաղկացած, փոքրադիր, բայց հաստափոր մի ձեռագիր է, որի 392 էջը վազմտա է բուն պատմագրությունը, մնացյալ երեսները պատկերում են գրաբար բանաստեղծություններ, իսկ վերջին 40 էջը բովանդակում է մի բառարան: Զեռագրի առաջին երեսի վրա արձանագրված է.

«Գիրք որ կոչի Հանգիտագիրք², որ է մտածմունք ժամանակակից անցելոց և ներկայից:

Հանգանակեալ և ծրեալ³ ի հայրապետութեան Սրբոյ սարսափելի Աթոռոյն էջմիածնի Տեառն Ղուկասոյ Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց: Եւ ի առաջնորդութեան նահանկիս մերոյ Տեառն վեհանձնեայ Մկրտիչ վճարի⁴ աստուծ առաջնորդին արժանաժառանգ ս[ուր]բ աթոռոյն Ամենափրկչի Վահակայն վանացս:

Ի ներթուրջ մարդեղութեան Տեառն ՌԶԶ, ի Թաղանութեան մերոյ ՌԲՃԼԶ (1787 թ.), ներամսեանն յուլիսի, որոյ յա[ւ]ուրքն էին Ժ և Ե (15):

Ապաշնորհ Տ[է]ր Ստեփանոսէն:

2. ՍՏԵՓԱՆՈՍ ԵՐԵՑԻ ՊԱՏԿԵՐԸ

Հանգիտագիրք ձեռագիր մատյանը բաղկացած է վեց առանձին և կարևոր մասերից:

Զեռագրի առաջին և էական էջերից մին երրորդ թերթիկի վրա գծված Ստեփանոս Երեցի նկարն է: Դա մի պարզ, բայց կենդանի և խոսուն պատկեր է, որ իր ներդաշնակ և համաչափ գծադրությամբ վկայում է անհայտ նկարչի վրձինի մասին:

1. «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, տպագրելով մեր հարգելի աշխատակցի այս արժեքավոր հոդվածը, հավատացած է, որ իրանահայ մեր գրասեր շրջանը մտտիկ ապագայում հրատարակության կհանձնի մեր մուսուլման մատենագիրներից մեկի՝ Ստեփանոս Երեցի «Հանգիտագիրք»ը և գիտական լայն շրջանի սեփականությունը կգարձնի այն:— ԽՄԲ.:

Այնպեղ պատմագիրը կանգնել է իր ամբողջ հասակով: Քահանայախան պարզ, բայց տիպիկ տարազը, զլխի փոքրիկ գլխարկը, ձախ ուսից գցած սև վերնաշարը, մեջքի գոտին, ոտների մաշիկները, որոնք աղքատական ուրույն արժեք ունեն, առանձին փայլ են տալիս նկարին: Նա իր աջ ձեռքը դրել է սև վերաբվուպի ծայրին, իսկ ձախն երկարել դեպի առաջ, ասես ցույց է տալիս իր գրչի հաղթանակը:

2. Պատմագիրք:

3. Դրել, նկարել:

4. Սուրբ, հասակ:

Մի առանձին խորհրդավորություն և լրջություն է իշխում նրա շեշտված և խոսուն դեմքի վրա, որին առանձին գրավչություն են տալիս փոքրիկ սև մորուքը, սև, խոհուն, թափանցող աչքերը, որոնք արտահայտում են նրա հոգու պարզությունը, բարոյական առաքինությունը և շեշտված անհատականությունը: Զգում եք, որ ձեր դիմաց կանգնել է իր ժամանակի լուսամիտ, առաջադեմ,

բարեմիտ և պարկեշտ մի հոգևորական, որ գիտակից իր կոչմանը, միշտ ապրել է ժողովրդի մեջ, համակվել է նրա ցավերով ու վշակերով և իր անձնվեր, ուղղամիտ, շիտակ գործունեությամբ սիրվել է ու հարգվել ամենաբից:

Նկարի տակ պատմագիրն իր ձեռագրով մակագրել է. «Ստեփաննոս վատքար, շնչին, քարշ, մեղաւոր, աղտեղի, հին»:

3. ՊԱՏՄԱԳՐԻ ԿՅԱՆՔԻ ՈՒՐՎԱԳԻՄԸ

Ստեփաննոս Երեցի կյանքի մի քանի փաստական տվյալները ձեզ տանում են Իրանի Սպահան նահանգի Փերիա գավառի Հազարջրի գյուղը, որի մասին Նոր-Ջուղայի պատմագիր Հարություն Տեր-Հովհանյանցի «Պատմութիւն Նոր-Ջուղայու» գրքի Բ հատորի 304-րդ էջում կարդում ենք.

«Հազարջրի գիւղ Յշանատր էր ի նախկին ժամանակս թէ՛ սակս բազմամարդութեանն՝ որ ունէր վեց հարիւր տուն բնակիչ, և թէ՛ յաղաղս անդ լինելոյ վանացն Աստուածածնի, յորում նստէր առաջնորդ և իշխէր ոչ միայն Փէրիոյ գաւառին՝ այլև Համադան քաղաքի: Այլ յետ վանացն ամայանալոյ, և բնակչացն նւազելոյ, այժմ է իբրև զմի ի հասարակ գիւղօրէից»: Ահա հայաբնակ այս գյուղում 1746 թվականին ծնվել է Տեր Ստեփաննոսը: Նա իր կրթությունն ստանում է Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում, ապա ձեռնադրվում է քահանա և օծված լինելով գրական ձիրքով՝ շուտով փայլում է որպես պատմագիր և բանաստեղծ:

Պա այն դարաշրջանն էր, երբ մի խումբ խաներ ու իշխաններ Իրանի գահի վրա բազմելու նպատակով՝ իրար հետ շարունակ մարտնչում էին, միաժամանակ ժողովրդին հարստահարում և ծանր հարկերով տանջում: Այդ բռնակալ խաներից առանձնապես աչքի են ընկնում Մահմադ խանը և Ալի Մուրադ խանը: Վերջինս դալիս է Նոր-Ջուղա և վայրագ բռնություններով կողոպտում Ամենափրկիչ վանքի և եկեղեցիների զարդերն ու զգեստները:

Հարություն Տեր-Հովհանյանցի «Պատմութիւն Նոր-Ջուղայու» գրքի Բ հատորի 65-րդ էջում կարդում ենք.

«...Եւ եկեալ զինւորացն, վալան զառաջնորդ Մկրտիչ վարդապետն և զլաջորդ Յակոբ վարդապետն՝ զերկուս ի միարանից՝ և զերկուս ի տիրացուաց, և եղին զֆալաղայն յոտս առաջնորդին և յաջորդին, և ախբան գանցին ի շորից կողմանց, մինչև տք նոցա ցծունկն ներկեցաւ արեամբ... Կողոպտեցին զամենայն որ ինչ կայր ի նոսա, և էր կշիռ արծաթոյն քսան և հինգ լիտր, բաց ի զգեստուցն. և կշիռ ոսկւոյն հրեք շարէք»:

Հարստահարությունների և բռնությունների պատկերը տեսնում ենք գյուղերում, որոնք մեկը մյուսից հուզիչ են և թախծոտ: Ահա՛ նման մոայլ շրջանումն է ապրել Ստեփաննոս Երեցը:

Ուշադրավ է մի երևույթ, որ ժամանակի դավառական քահանաներն ու տանուտերերը նրա վրա բարոյական պարտականություն են դնում պատմության հանձնել ժողովրդի քաշած նեղություններն ու տառապանքները: Եվ նա «զտիւ և զգիշեր», «մեծաւ տքնութեամբ» և «արտաստաթօր աչօք» գրում է իր պատմությունը: Այդ մասին Ստեփաննոս Երեցը Նոր-Ջուղայի հայոց առաջնորդ՝ Մկրտիչ Կպիսկոպոսին ուղղած զեկույցի մեջ գրում է հետևյալ բնորոշ տողերը.

«...Հանգիտագրիս գործառութեանս մեծաւ խոնարհութեամբ պատկառանք հանդերձ զեկուցանեմ առ զորովագոյթ ծնողդ իմ. քանզի քահանայից և տանուտերաց գաւառաց հարկ եղին ի վերա[յ] թերագոյն ծառայիս ախբան ճեպով և ըշտապով որ ո՛չ կարացի քերցել⁵ և զերծանել⁶ վարմից⁷ նոցա»:

5. Որոջել:
6. Վերջացնել:
7. Որոգայթ:

4. ԶՆՈՒԱԳՐԻ ՄՅՈՒՍ ԷԱԿԱՆ ՄԱՍՆԸ

Ստեփանոս Երեցի ձեռագիր մատյանի երկրորդ և ամենաարժեքավոր, ուշագրավ մասը պատմագրությունն է, որ բաժանված է բառասուն զուգմաների, որոնցից յուրաքանչյուրն ունի իր խորագիրը և բաղկացած է 392 էջից: Դա ճոխ, հարուստ, բազմերանգ մի պատմություն է, որ գլխավորապես ընդգրկում է 1665—1789 թվականների պատմական կարևոր անցքերի, դեպքերի, դեմքերի ու երևույթների արձանագրությունը: Սկսում է Շահ Աբբաս Բ-ի ժամանակաշրջանից և նկարագրում Իրանի հաջորդ թագավորների գործունեությունը: Առանձնապես զծուծ է 18-րդ դարի պատկերը: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ բազմաթիվ պարսիկ էջիսաններ ու խաներ,

օգտվելով երկրում տիրող անիշխանությունից, ձգտում են տիրել Իրանի գահին: Այդ նպատակով նրանք ո՛չ միայն միմյանց դեմ շարունակ կռվում են, այլև թե՛ գավառների և թե՛ գյուղերի անաշտական ժողովրդին ճնշումներով, բռնություններով և հարստահարություններով տնտեսապես քայքայում են:

Պատմագրքում ուրույն տեղ են գրավում նաև Նոր-Ջուղայի, Սպահանի Փերիա և Բուրվարի գավառների ժողովրդի կյանքի կարևոր դեպքերի նկարագրությունները: Այդ պատմական արձանագրությունների մեջ էլ կայանում է Ստեփանոս Երեցի ձեռագիր մատյանի թե՛ գրական և թե՛ հասարակական արժանիքը:

5. ԶՆՈՒԱԳԻՐ ՄԱՏՅԱՆԻ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ստեփանոս Երեցի ձեռագիր պատմությունն իր փաստական տվյալներով մեծ արժեք է ներկայացնում կրկնակի տեսակետներով:

Աշխատությունը խոշոր նշանակություն է ստանում, երբ նրան նայում ենք որպես 17-րդ և 18-րդ դարաշրջանների աղբյուր: Այդ պատմաշրջանների մասին եղած տեղեկությունները թե՛ մեր և թե՛ մյուս ժողովուրդների պատմագրության կողմից է՛լ ավելի հարստացնելու և ստուգելու համար Ստեփանոս Երեցի ձեռագրի ամեն մի նոր էջը, ամեն մի նոր գծագրությունը կարելի է կարևորագույն փաստաթուղթ համարել:

Նույնպես ձեռագրի բովանդակությունը չափազանց կարևոր նշանակություն է ստանում, երբ նրան դիտում ենք պարսիկ, վրացի, աղվան, լոռ և առանձնապես իրանահայ ժողովուրդների պատմության ուսումնասիրության տեսանկյանից:

Ուշագրավ է, որ պատմագիրը վատարյալ անաշտությունք և արդարագատ կերպով զծել է ժողովրդական հարստահարությունների, զրկանքների, նեղությունների և տառապանքների պատկերը, որոնք առաջանում են ժամանակի տիրող իշխանների, խաների ասպատակություններից: Պատմական այս դեպքերը, որոնց մասին ձեռագրում կարդում ենք շատ թանկագին փաստաթղթեր, հանդիսանում են մի երևույթ, որն ընդգծում է պատմագրության հասարակական խոշոր արժեքը:

Ձեռագրի բովանդակությանը մի առանձին երանգ են տալիս նաև այն կարևոր տեղեկությունները, որոնք բոլորովին նոր են իրանահայ պատմագրության համար, Այդ տե-

սակետից ուշագրավ են, օրինակ, ձեռագրի 33-րդ (էջ 285), 34-րդ (էջ 294), 35-րդ (էջ 307) պրակները, որոնք հյուսված են հովվերգական, իդիլիական շնչով:

Ստեփանոս Երեցի պատմությունն ունի մի ուրիշ առավելություն, որից զուրկ են նրա նախորդ պատմագիրները: Նրա անպաճույճ, անարվեստ, բայց հուզիչ պատմագրության մեջ հավաքված են բազմաթիվ փաստեր ո՛չ միայն Իրանի գավառական, այլև գյուղական ժողովրդի կյանքից: Այնտեղ պարզ գծերով երևան են գալիս Սպահանի Փերիա և Բուրվարի գավառների կենտրոնական գյուղերը և մենք տեսնում ենք գյուղացի ժողովրդի ճնշումների, կեղեքումների և գաղթի հուզիչ ու մռայլ պատկերներ: Այդ էջերով պատմագիրը մեզ տալու է գյուղական ժողովրդի մեջ— ահա թե ի՛նչն է փահաստելի Ստեփանոս Երեցի մատենագրության մեջ:

Ձեռագրի էական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այնտեղ հետաքրքիր մանրամասնություններ են հանդես գալիս այնպիսի տեղերում, ուր մի այլ պատմագիր կբավականանար միայն ամփոփ, սեղմ, համառոտ հիշատակությամբ: Այդ երևույթն էլ նշում է Ստեփանոսի սուր դիտողությունն ու բարեխղճությունը:

Սակայն ամենահիմնական հատկանիշներից մին, որ է՛լ ավելի բարձրացնում է պատմագրության բովանդակությունը, դա իրականությամբ հարազատ նկարագրությունն է. պատմաբանը շատ դեպքերին ժամանակակից և ականատես լինելով, իր պատմությունը, մեծ մասամբ, հիմնել է բացահայտ ճշմարտության վրա, այսինքն՝ նկարագրել է այն ամենը, որին ականատես է եղել ինքը,

ինչ որ տեղի է ունեցել, ինչ որ լսել է: Որպես պատմագիր նա եկել է ա՛յն եզրակացության, որ պատմությունը, ինչպես ասել է Կիկերոնը, չպիտի սուտ ասի, ո՛չ էլ թաքցնի որևէ ճշմարտություն: Այդ տեսակետով մտածեցել է Տեր Ստեփանոսը ժամանակակից դեպքերին և իրենց հարադատությունը արձանագրել է: Թիրևս այդ հանգամանքով էլ պիտի բացատրել, որ նրա պատմագրության մեջ դեպքերն ու դեմքերը գծված են կենդանի գույներով և ուր արտացոլում է ժողովրդի ունի կյանքը:

Եվ իրոք, Ստեփանոս Երեցը գլխավորապես ուսուցիչ պատմաբան է. կատարելապես դիտակից իր կոշտամին, նա նկարագրել է ընդհանրապես ժամանակաշրջանի գերիշխողներին, ասպատակողների սխրագործությունները, պատահի վրա նկարելով ժողովրդի անլուր տանջանքներն ու նյութական զրկանքները՝ իրենց հսկական գույներով:

6. ՁԵՌԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՅԵՐԸ

Ստեփանոս Երեցի պատմագրությունը, իր դրական հատկանիշների հետ միասին, ունի մի քանի հիմնական բացեր: Այնտեղ կան այնպիսի նկարագրություններ, որոնց իրողությունները նա քննադատական վերլուծության չի ենթարկել, չի բացատրել և չի լուստարանել պատահած դեպքերի պատճառներն ու հետևանքները: Իբրև լոկ ականատես և կյանք նկարագրող, նա չի զանազանել և ստուգել կարևոր փաստերն անկարևորից և երբեմն էլ իր լսած հրաշագործ ավանդություններին հավատ է ընծայել, մոռանալով իր պատմաբանի կոշտամբ, որ նյութիկ վառուցելիս պետք է տվյալները խնամքով ու-

սումնասիրել, բաղդատել ու զնահատել, պետք է քննադատաբար ստուգել և կազմել նրանցից մի ինքնուրույն ամբողջություն, որի անունն է պատմություն և որի նպատակն է նշմարտությունը: Պիտի նշել, սակայն, որ նման ավանդական էջերը ձեռագրում մի-երկու պրակ են կազմում և երբե՛ք չեն նսեմացնում նրա պատմության խոշոր նշանակությունը, որ իր բովանդակությամբ հարուստ, բազմազան տեղեկություններ է տալիս, ինչպես դիտել ենք, թե՛ Իրանի շահերի, թե՛ աղվանների, թե՛ վրացիների և թե՛ լոռերի պատմության մասին:

7. ՁԵՌԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ԳԼԵԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐ ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Արձանագրենք մի կարևոր հանգամանք ևս: Ստեփանոս Երեցի արժեքավոր ձեռագիր պատմությունից ամենալայն չափով օգտվել է Նոր-Ջուղայի պատմագիր՝ Հարություն Տեր-Հովհաննիսյանը: Բացե՛ք նրա «Պատմութիւն Նոր-Ջուղայու» (տպ. Նոր-Ջուղա, 1880 թ.) ներկհատոր պատմագրությունը և այնտեղ պիտի գտնեք բազմաթիվ էջեր, որոնք իրենց բովանդակությամբ կատուցված են Ստեփանոսի ձեռագրի փաստական տվյալների վրա: Այնտեղ պիտի կարդաք նաև ամբողջական հատվածներ, որոնք նույնությամբ քաղված են Տեր Ստեփանոսի ձեռագրից: Այդ մասին խոստովանում է հենց ինքը՝ պատմագիր Հարություն Տեր-Հովհաննիսյանը իր «Պատմութիւն Նոր-Ջուղայու» աշխատության Ա հատորի 3-րդ էջում ընդգծելով հետևյալ տողերը.

յերկրորդ Շահաբասայ սկսեալ ցլօթվալի խան Ջանդի. զհարստահարութիւնս գաւառին Փէրիոյ, զպատմութիւնս զանազան մասնաւորաց որք ճշնակիաց առաքինութեամբ հրաշագործ համբաւեցան ի Փէրիա, ընդ որս և համառօտեաւ յիշատակութիւն ինչ զարկածիցն Ջուղայու: Այիզբն պատմութեանն այնորիկ էր ի շինութենէ Սուրբ Աստածածնի վանացն Հազարչրիբոյ ի 1114 (1665) թվականի Հայոց, որ աւարտեալ լինէր ց1263 (1814 թ.): Ոճ պատմութեանն էր բազմաբառ և սակաւիմաստ. յորմէ ընտրանօք քաղեալ զետեղեցի յիմում պատմութեան զնիւթս իւրաքանչիւր գլխոյ պատշաճաւոր. և ուրանօր ի մէջ բերի զնորա բանս ի վկայութիւն, ոչ առանց սրբագրութեան թողի, զաւելորդ կրկնաբանութիւնսն յապաւերով՝ և զբուն իմաստն պահելով ամբողջ: Զամենայն շարադատութիւնս նիւթոց այսր պատմութեան՝ ոչ գրեցի առանց քաջ խելամուտ յինելոյ հաւաստի ապացուցութեանց նոցին. քաղելով յաղբերաց՝ և բաղդատելով ընդ այնպիսի հնտութեանց՝ զորոց ստուգութենէ ոչ էր մարթ երկբայութիւն ինչ ունել»:

«...Առաւել սատարողն իմում ձեռնարկութեան եղև տետրակ մի գրեալ ի Տէր Ստեփաննոս քահանայէ ի գեղջէն Հազարչրիբոյ գաւառին Փէրիու, զոր գտի ի գըրքատան Ամենափրկչեան վանին: Էր այն պատմութիւն, որ պարունակէր յինքեան զյաջորդութիւն թագատորացն պարսից

Իր պատմության Ա հատորի 226-րդ էջում Տեր-Հովհաննյանցը նույնպես արձանագրել է. «Զարունակութիւն պատմութեանս զրեցի հետեւելով բանիցն Տեր Ստեփաննոս պատմաբանի, առեալ ի շորորդ գլխոյ պատմութեանն նորա՝ ցկէսն հինգերորդ գլխոյն. էջ 49—ց65»:

Ավելի ցայտուն զաղափար կազմելու համար՝ համեմատական մանրակրկիտ քննութեան ենթարկեցինք Տեր Ստեփանոսի ձեռագիր մատյանը Տեր-Հովհաննյանցի «Պատմութիւն Նոր-Ջուղայու» երկհատոր աշխատութեան հետ: Ստուգումից պարզվեց, որ Նոր-Ջուղայի պատմագիրն օգտվել է Ստեփանոս

Երեցի ձեռագրի հետևյալ էջերից. 23, 24, 26—30, 49, 65—67, 68—80, 81—108, 111, 112, 115—118, 119—124, 126—131, 132—143, 144—150, 151—160, 161—163, 169—180, 181—192, 193—205, 211—221, 222—227, 228—253, 254, 267—279, 284, 285, 339—351, 353—370:

Այստեղ առաջ բերենք նաև Տեր-Հովհաննյանցի «Պատմութիւն Նոր-Ջուղայու» աշխատութեան այն էջերը, որոնք նույնությամբ բաղված են Ստեփանոս Երեցի ձեռագրից. 235, 236, 284, 329, 330, 331, 339, 343, 345, 374 և 375 (Ա հատոր), և 64, 65 (Բ հատոր)⁸:

8. ՁԵՆԱԳԻՐ ՄԱՏՅԱՆԻ ԲՈՎԱՆԴԱՌԹՅՈՒՆԸ

17-րդ և 18-րդ դարաշրջանների պատմության էջերն ուսումնասիրելու համար շատ կարևոր է Ստեփանոս Երեցի մատյանի բովանդակության ցամաքը, որի ամբողջական պատկերն է հետևյալը.

- Ա. Սակս շինութեան վանիցն Աստուծածնի:
- Բ. Սակս աւերման վանոցն և տառապանացն քրիստոնէից:
- Գ. Սակս բառնալու մուղաղային:
- Դ. Սակս թագաւորութեան Շահ Սուլթան Հուսէնին:
- Ե. Սակս ապստամբելոյ աղտանիցն ի թագաւորէն:
- Զ. Սակս թագաւորութեան աղտանին և ապստամբ լօտիցն:
- Է. Սակս ս[ուր]իք աշոյն Թօմայի և սքանչելեացն նորայ:
- Ը. Սակս գալոյ Յրիտոն խանին ի վերայ աղտանից և կոտորելոյ զազգս հայոց շորս գեօղս:
- Թ. Սակս թագաւորութեան Շահ Աշրաֆին:
- Ժ. Սակս թագաւորութեան նատրին և մահու նորայ:
- ԺԱ. Սակս ուրանալոյ քրիստոնէիցն՝ ի դաւառն Բուրվարի:
- ԺԲ. Սակս ըսպանման Նադրին և թագաւորութեան Ատրլ շահին:
- ԺԳ. Սակս ապստամբելոյ լօտիցն և աւերման երկրի:
- ԺԴ. Սակս գնալոյ Ազաթ խանին ի Փէրի քամազան:
- ԺԵ. Սակս կրկնակի գալոյ Ազաթ խանին ի յԱսպահան:
- ԺԶ. Սակս գալու Հասան խանին և սովոյն մեծի:
- ԺԷ. Սակս թագաւորութեան Քարիմ խանին:

- ԺԸ. Սակս հուժականի բնութեան Քարիմ թագաւորին և վասն ապստամբ լօտիցն:
- ԺԹ. Սակս մահուն Քարիմ խանին և խանդարումն թագաւորութեան նորայ:
- Ի. Սակս իշխանութեան Ալի Մուրատ խանին և վասն ապստամբութեան նորայ:
- ԻԱ. Յաղագս գնալոյ Ալի Մուրատ խանին ի Խամսայ և ըմբռնումն Զլխնվարին:
- ԻԲ. Սակս գալու Ալինազի խանին և դերելոյ կուսիցն:
- ԻԳ. Յաղագս գնալոյ Ալի Մուրատ խանին ի Շիրազ և առնել բերրն Շիրազոյ:
- ԻԴ. Վասն գնալոյ Ալի Մուրատ խանին ի Թէհրան և վասն մահուն նորին:
- ԻԵ. Սակս գալոյ Մահմադ խանի ներքինի ի քաղաքն Ասպահան:
- ԻԶ. Յաղագս մեծի նեղութեանցն զորս կրեցին ազգն հայոց և վրաց ի ձեռանէ Մահմադ խանին:
- ԻԷ. Վասն գալոյ Մահմադ խանին ի դեօղն Սանկիքարան:
- ԻԸ. Սակս գալոյ Զաֆար խանին ի յԱսպահան և սպանման Բադր խանին:
- ԻԹ. Յաղագս գալոյ Մահմատ խանին ի յԱսպահան և դարձն Զաֆար խանին:
- Լ. Վասն երրորդ անգամ գալոյ Մահմատ խանին, որ և քշեաց հայոց ազգն որ էին ի գաւառն Բուրվարի, տարաւ ի Թեհրան:

8. Տեր-Հովհաննյանցը ձեռագիր մատյանից մեջբերումներ անելիս տեղ-տեղ փոխել է բառերը և չի պահպանել բնագրի հարազատությունը:

- 1Ա. Սակս գալոյ Մահմադ խան արապին ի քաղաքն Ասպահան, ի վերայ: Ջաֆար Ղուլի խանին և դարձն նորայ:
- 1Բ. Յաղագս սքանչելիացն Աստծոյ որ եղև ձեռամբ առն միոյ Արզան անուն:
- 1Գ. Վասն սքանչելիացն որ եղև ի գեօղն Հազարջրիպ ի խոնարհեալ վանացն:
- 1Դ. Սակս ազատութեան Ղատամին ձեռամբ Սրբոյն Սարգսի զօրավարին:

- 1Ե. Յաղագս յայտնելոյ ճգնատրին որ էր ի լերինն Քէիզոյ:
- 1Զ. Վասն մեծի սովոյն զոր կրեցաք ի ժամանակս Մահմատ խան ներքինոյն:
- 1Է. Սակս մահուն Ջաֆար խանին և այլն:
- 1Ը. Յաղագս գալոյ Մահմադ խանին ի վերայ բերքին Շիրազոյ և դարձն նորայ:
- 1Թ. Վասն խրատ քահանայից և առաջնորդաց ժողովրդոց:
- 1Պ. Սակս ճորտդութեան ս[ուր]ը Աստուածածնի վանաց եկեղեցոյն:

9. ՋԵՌԱԳԻՐ ՄԱՏՅԱՆԻ ԼԵԶՈՒՆ

Չնայած ձեռագրի լեզուն գրաբար է և համեմված է տեղական և օտար բառերով, չնայած և նրան, որ քերականական, տառական, կետադրական անհամար սխալներ կան, բայց պատմագրութեամբ դրված է շատ պարզ, մատչելի հայերենով և քնդհանրապես կարդացվում է հետաքրքրությամբ ու առանձին հաճույքով:

Այլևս ժամանակն է, որ այս արժեքավոր պատմագրի թանկագին ձեռագիրն իր ամբողջությամբ հանձնվի տպագրության, որովհետև դա մի այնպիսի վարեոր աղբյուր է, որ իր հիմնական գծերով շատ ուշագրավ էջեր է լուսարանում ոչ միայն հայ, այլ թե՛ իրանի, թե՛ վրաց, թե՛ լոռ և թե՛ աղվան ժողովուրդների պատմագրության համար:

10. ՊԱՏՄԱԳՐԻ ՇԻՐԻՄԸ

Անցեք Սպահանի Փերիա գավառը և վանդ առեք հայարնակ Հազարջրիբ գյուղի գերեզմանատանը, ուր հանդչում է պատմագիր

Ստեփանոս Երեցը: Հողակույտի վրա դրված է մի անպաճույճ բար, որի ճակատին քանդակված է հետևյալ տապանագիրը.

«ԱՅՍ Է ՇԻՐԻՄ ԵՒ ԴԱՄԲԱՐԱՆ,
 ԳԱՐԱՊԱՏՈՒԷՐ ՅՈՅԺ ՄԹՈՒԹԵԱՆ,
 ՀՈՂԱԽՇՏԻ ՀԱՆԳՍԱՐԱՆ:
 Ի ՎՃՌԷ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ,
 ԴԱՌՆԱԼ Ի ՀՈՂ ՈՒՍՏԻ ԱՌԱՆ,
 Ի ՍԱՀՄԱՆԷՍ ՈՉ ՈՔ ԴԱՌԱՆ,
 ՆԱԽԱՀՈՐԷՆ ՈՐՔ ՍԵՐԵՅԱՆ:
 ԱՍՏ ԱՄՓՈՓԵԱԼ ԾԵՐ ՔԱՀԱՆԱՅՆ
 ՍՏԵՓԱՆՈՍ ԳՈՐԾՈՎ ՈՒՆԱՅՆ:
 ԷՐ ՍԱՅ ՎԱ[Թ]ՍՈՒՆ ՉՈՐՍ ԱՄԵԱՆ,
 ՈՐ ՓՈԽԵՑԱԻ ՅՈՅՍՆ ԱՄԵՆԱՅՆ,
 Ի ԹՈՒԱԿԱՆԻՍ ՀԱՅԿԱԶ[Ե]ԱՆ
 Ռ.Մ.Կ.Բ. ԼՐՄԱՆ (1813 թ.)»:

11. ԱՆՏԻՊ ԷՋԵՐ ՍՏԵՓԱՆՈՍ ԵՐԵՅԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Ստեփանոս Երեցի լեզվի, ոճի և պատմագրութեան արվեստի մասին ավելի ցայտուն դադափար ստալու համար, այստեղ նրա պատմագրքից առաջ բերենք հետևյալ անտիպ կտորը.

«ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՆԱԴՐԻՆ ԵՒ ՍՊԱՆՄԱՆ ՆՈՐԱ

Եւ եղև յորժամ տիրեաց յԱսպահան քաղաքին Քահմադ խանն և Քահմազղուլի խանն որ է Նազրն ի թուականութեան յԱ-

բամբակն ՌՃՀԹ-ին (1730 թ.) և Նադրն տեսանէր օր յաւուր Թահմազ խանն ի գինարբունս և ի առասպելաբանութիւնս պաղեալ՝ հրամայեաց խորամանկ և օձաբարոյ Նադրն այն զօրաց իւրոց սպանանել զնայ՝ որ և հարին բալխտուրա՞ զկուշտ Թահմազ խանին որ ի միւս կշտէն թաքանծեաց: Եւ յետ սպանման սորայ հանգանակեաց զզօրս իւր ի գնալ ի վերայ զօրացն օսմանցոցն՝ ի գաւառն Քրմանշահու, քանզի զօրքն օսմանցոցն եկեալ էին ի գաւառն Քրմանշահու:

Տեր Ստեփանոսի գրականութեան մեջ ուրույն տեղ են գրաւում նաև բառարանը, «Շարադրանք»ը, «Տաղարան»ը և այլ երկեր: Նրա գրած տաղերը նշում են իր բանաստեղծական ձիրքի մասին: Այդ ոտանավորներից ուրույն արժեք է ներկայացնում «Ո՞րն ողբացում» խորագրով տաղը: Դա Մահմադ խանի բռնությունների նկարագրությունն է: 1875 թվականին նա հարձակվում է Սպահանի Փերիա զավառի անօգնական գյուղացիներին վրա, դրավում է նրանց եզներն ու ոչխարները, կողոպտում ցորենի ամբարները և ժողովրդի մեծ մասը տարագրում է Պարսկաստանի խորքերը: Ահա՛ տաղի ամբողջական պատկերը.

9. Հին ժամանակ պատերազմական գործիք, որով նետեր՝ բարեր էին արձակում թշնամու վրա:

«Ո՞ՐՆ ՈՂԲԱՍՑՈՒՔ

«Արդ ո՞րն ողբացուք՝
Զբոկով ոչխարսն մեր՝ զոր աւար առին,
Թէ այս՝ որ թանի կարօտ մնացար.
Զամբարսն ցորենոյ՝ զոր կողոպտեցին,
Թէ այս՝ որ հացի կարօտ մնացար:

Արդ ո՞րն տոշորեսցուք՝
Զարտորա՞յս մեր՝ զոր հնձեցին,
Թէ այս՝ որ հասկաբաղի կարօտ մնացար.
Ո՞րն մորմոքեսցուք՝
Զսա՛յս մեր՝ զոր այրեցին,
Թէ այս՝ որ կալի կարօտ մնացար:

Արդ ո՞րն աշխարեսցուք՝
Զգեղեցկայարմար եկեղեցի՞ս մեր՝ զոր
հրդեհեցին,
Թէ այս՝ որ ժամի կարօտ մնացար:

Արդ ո՞րն տուժեսցուք՝
Զտո՞մս մեր՝ որ փուլցեալ կան,
Թէ այս՝ որ բացօթեալ մնացար:
Եւ զո՞րն կոծեսուք՝
Զմեռեա՞լսն՝ որք գիշատեալ կան,
Թէ զմեղ՝ որք կենդանոյն մեռեալ եմք»:

Այս պարզ, բայց սրտառուչ ոտանավորը թանկագին մի վավերագիր է, որն իր բովանդակությամբ ցայտուն գաղափար է տալիս Սպահանի Փերիա զավառի գյուղացիների հասարակական-տնտեսական ծանր դրության և ժամանակի ճորտական վարդաբլի մասին:

